ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵԽ ՎԱԼԵՆՍԱՅԻՆ

Ապրիլի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Լեհաստանի նախկին նախագահ, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Լեխ Վալենսային՝ ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թոմազ Նոռմֆի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Լեխ Վալենսայի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության առիթով՝ գոհունակությամբ անդրադառնալով հայ և լեհ ժողովուրդների բարեկամությանը, որ ձևավորվել է դեռևս միջնադարում Լեհաստանում հայ համայնքի հաստատմամբ:

Վեհափառ Հայրապետը նաև իր երախտագիտությունը հայտնեց Լեհաստանի ժողովրդին և իշխանություններին, որոնք Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցի նախաշեմին Լեհաստանի Խորհրդարանում ճանաչեցին և դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: «Այսօր Ձեր ներկայությամբ դուք հաստատում եք, որ ցեղասպանությունը ժամանակ, տարածություն և ազգություն չի ճանաչում, որ դա համամարդկային ոճիր է և դատապարտության է ենթակա բոլոր ժամանակներում»,- ասաց Նորին Սրբությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԴԱՇՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի փոխնախագահ Գեորգի Բոոսին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց ՌԴ Դումայի կողմից կատարված հայտարարության համար, որով մեկ անգամ ևս դատապարտվեց Հայոց ցեղասպանությունը և կոչ ուղղվեց ողջ միջազգային հանրությանը՝ հիշատակել Եղեռնի 90-ամյա տարելիցը:

«Մենք վստահ ենք, որ կգան օրինյալ ժամանակներ, երբ ցեղասպանություն, պատերազմ հասկացություններն այլևս պատմության մեջ կմնան: ... Հուսով եմ, որ Հայոց ցեղասպանության դատապարտումը կօգնի վերստին գիտակցել, թե որքան փխրուն է այսօր մեր աշխարհը, կօգնի բարու իրագործմանը»,- ասաց Գեորգի Բոոսն իր խոսքում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև երկու ժողովուրդների միջև առկա եղբայրական ջերմ հարաբերություններին և Հայ Առաքելական ու Ռուս Ուղղափառ Եկեղեցիների սերտ համագործակցությանը և բարեկամությանը: